ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2020թ. **N---Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

«1 Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ» N 178-Ն որոշման հավելվածի 4-րդ մասի 43-րդ կետից հետո շարադրել հետևյալը՝

V. «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԿ-ՆԵՐԻՆ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ»

44. Սույն գլխով կարգավորվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը (այսուհետ՝ անշարժ գույք) համայնքի տարածքում գործող ՀԿ-ներին, հիմնադրամներին և միջազգային հասարակական կազմակերպություններին (այսուհետ՝ կազամկերպություններ) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու գործընթացը:

45. Երևան համայնքի անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով կարող է տրամադրվել համայնքի տարածքում գործող և ՀՀ-ում առնվազն 2 տարի գրանցված և գործունեություն ծավալող՝

1) հասարակական կազմակերպություններին
2) հիմնադրամներին.
3) միջազգային հասարակական կազմակերպություններին

Որոնք՝

1) Նպաստում են հանրային առողջապահությանը, ինչպես նաև իրականացնում են հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների խնամք,

2) Նպաստում են Երևան համայնքում կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիաների զարգացմանը;
3) Նպաստում են Երևան համայնքի բնակչության շրջանում սպորտի և առողջ ապրելակերպի խթանմանը:
4) Իրականացնում են Երևան համայնքի պատանիների և երիտասարդության կարողությունների զարգացման ծրագրեր, իրականացնում են ոչ ֆորմալ կրթություն, զարգացնում են կամավորական մշակույթը:
5) Նպաստում են Երևանում արվեստի և մշակույթի զարգացմանը:
6) Իրականացնում են Երևան համայնքի շրջակա միջավայրի պաշտպանությանը միտված ծրագրեր և միջոցառումներ:
7) Նպաստում են Երևանում երիտասարդության զարգացմանը և երեխաների պաշտպանությանը միտված ծրագրեր:
8) Երևանի տարածքում իրականացնում են հատուկ կարիք ունեցող անձանց, այդ թվում՝ ծերերի, երեխաների, ալկոհոլային կախում ունեցող անձանց, անօթևանների և այլ խոցելի խմբերի խնամք:
9) Իրականացնում են քաղաքացիների իրավունք~~ներ~~ների պաշտպանության, բարձրաձայնման, ուսումնասիրման հետ կապված գործունեություն:

46 Անհատույց օգտագործման գույք չի կարող տրամադրվել այն կազմակերպություններին, որոնք՝

1) Իրենց գործունեությամբ խախտում են ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով սահմանված խտրականության արգելքի պահանջը:
2) Իրենց գործունեությամբ ոտնահարում են անձի արժանապատվությունը, նպաստում են բռնության և ատելության մթնոլորտի տարածմանը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի և կարգավորումների շրջանակներում:
3) Իրենց գործունեությամբ խախտել են «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքից բխող որևէ դրույթ կամ պարտավորություն:

47. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը կարող է տրամադրվել կազմակերպություններին նաև Երևան համայնքում կազմակերպության կողմից իրականացվող հետևյալ ծրագրերի համար՝

1) Առողջապահական ծրագրեր
   ա Հանրային առողջապահական ծրագրեր, ներառյալ տուբերկուլյոզի, ՍՃՓՀ-ի եւ ՄԻԱՎ / ՁԻԱՀ հիվանդությունները:
   բ Առողջ ապրելակերպի խթանման ծրագրեր, օրինակ՝ թմրանյութերի օգտագործումը, ալկոհոլի չարաշահումը, ծխախոտից կախվածությունը նվազեցնելու ծրագրեր:
   գ Առողջապահական և կանխարգելիչ ծրագրեր նորածինների, երեխաների և կանանց շրջանում:

2) Շրջակա միջավայրի պահպանություն
   ա Շրջակա միջավայրի պահպանության անհրաժեշտության մասին իրազեկվածության ծրագրեր:

բ Կանաչապատման, կենսաբազմազանության պահպանման և զարգացման ծրագրեր, համայնքային ռեսուրսների պահպանմանը և որակյալ քաղաքային տարածքների ստեղծմանը միտված ծրագրեր։
գ Քաղաքային գյուղատնտեսության խթանմանը ուղղված ծրագրեր։
դ Կենդանական աշխարհի բարեկեցության միտված ծրագրեր։
ե Թափոնների օգտագործմանը, վերամշակմանը և կրճատմանը ուղղված ծրագրեր
զ Բուսաբանական և կենդանաբանական այգիների բարելավման ծրագրեր։

3) Սոցիալական ապահովություն
ա Աղքատության նվազմանը և աշխատատեղերի ստեղծմանը միտված ծրագրեր
բ Համայնքի կարողությունների զարգացման ծրագրեր
գ Երիտասարդների զարգացման ծրագրեր
դ Կանանց զարգացման և գենդերային հավասարության ծրագրեր
ե Վաղ տարիքի երեխաների խնամքի և զարգացման ծրագրեր
զ Խոցելի խմբի երեխաների զարգացման ծրագրեր
է Անօթևան երխաների աջակցման ծրագրեր

4) Սպորտ, երիտասարդություն, արվեստ, մշակույթ, ժամանց
ա Տեղական սպորտային և հանգստյան ակումբների և խմբակների կազմակերպման ծրագրեր
բ Առաջին բուժօգնության խմբերի ստեղծման ծրագրեր
գ Արվեստի և մշակութային միջոցառումների կազմակերպման ծրագրեր
դ Գիտական և տեղխնոլոգիական ոլորտի ծրագրեր
ե Համայնքային թանգարանների, գրադարանների և մարզադպրոցների զարգացման ծրագրեր
զ Երիտասարդների հմտությունների զարգացման, ոչ ֆորմալ կրթության, կամավորության զարգացման ծրագրեր

5) Հանրային անվտանգություն
ա Աղետի ռիսկի կանխարգելման և/կամ նվազեցման ծրագրեր
բ Աղետների հետևանքների նվազեցման ծրագրեր
գ Արտակարգ իրավիճակների նախապատրաստվածության ծրագրեր
դ Արտակարգ իրավիճակներին արագ և արդյունավետ արձագանքմանը միտված ծրագրեր
ե Հետաղետային առողջացմանը և վերականգնմանը միտված ծրագրեր

6) Քաղաքացիների իրավունքների պաշտպանություն
ա քաղաքացիներին իրավական խորհրդատվության տրամադրում
բ քաղաքացիների իրավունքների պաշտպանության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում։
գ քաղաքացիների իրավունքների վերաբերյալ իրազեկման, կրթական ծրագրեր իրականացում։

48. Ահհատույց օգտագործման տրամադրան դիմում-հայտը պետք է գրավոր ներկայացնել Երևանի քաղաքապետարան՝ դիմող կազմակերպության ղեկավարի կողմից։

49. Ահհատույց օգտագործման տրամադրան դիմում-հայտը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը՝

1) Հայտատուի անվանումը և գործունեության համառոտ նկարագիրը։
2) Կազմակերպության հիմնադրման և գրանցման թիվը
3) Կոնտակտային տվյալներ, ներառյալ հեռախոսահամար, հասցե, էլ հասցե
4) Կազմակերպության ղեկավարների մասին տեղեկատվություն
5) Նախորդ 2 տարիների ընթացքում իրականացրած ծրագրերի նկարագրություն
6) Ստացած ֆինանսավորումների և աղբյուրների մասին տեղեկատվություն
7) Դիմումատուի կողմից անհատույց տրամադրվող տարածքում նախատեսվող գործողությունների նկարագրություն։ Ընտրված գործողությունների իրականացումը պետք է բխի կազմակերպության կանոնադրական նպատակներից։

50 Եթե համայնքի գույքի օգտագործումը անհրաժեշտ է հատուկ ծրագրի իրականացման համար, ապա դիմումի մեջ պետք է ներառվի նաև հետևյալ տեղեկատվությունը՝

1) Ծրագրի նպատակները և ակնկալվող արդյունքները
2) Ծրագրի տևողությունը
3) Ծրագրի գործողությունները
4) Ծրագրի բյուջեն

51. Դիմումը պետք է ներառի հետևյալ աջակցող փաստաթղթերը՝
1) Կազամկերպության իրավաբանական անձանց պետական գրանցման վերաբերյալ քաղվածք
2) Վերջին ֆինանսական աուդիտի հաշվետվություն (առկայության դեպքում)
3) Դիմող կազմակերպության անդամների մասին տեղեկատվություն
4) Կազմակերպության կանոնադրությունը
5) Նամակ-հիմնավորում, որտեղ դիմումատուում ներկայացնում է ակնկալվող գործունեությունը, հիմնավորում է այդ գործունեության կարևորությունը Երևան քաղաքի և նրա բնակիչների համար, փաստարկում է Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպությանն աջակցելու նպատակահարմարությունը։

52 Յուրաքանչյուր նստաշրջանի ընթացքում գույքի տրամադրման կապակցությամբ ստեղծվում է Երևանի ավագանու բոլոր խմբակցություններից կազմված ժամանակավոր աշխատանքային խումբ՝ գույքի անհատույց տրամադրան դիմումի նախնական քննարկման և դրա վերաբերյալ ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողով տեղեկատվություն և կարծիք ներկայացնելու համար։

53 Երևանի ավագանու յուրաքանչյուր նստաշրջանի սկզբում, ավագանու խմբակցությունների ղեկավարները նշանակում են աշխատանքային խմբի անդամներին։ Յուրաքանչյուր խմբակցությունը կարող է ներկայացնել առավելագույնը 2 անդամ։ Աշխատանքային խումբը գործում է մինչև իր լիազորությունների իրականացման ավարտը՝ հաջորդ նստաշրջանի մեկնարկն ու նոր աշխատանքային խմբի անդամների նշանակումը։

VI. «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ»

54. Աշխատանքային խմբի ձևավորման, քննվող դիմումի էության և դիտարկման ընթացքի ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Երևան քաղաքի կայքէջում, Ֆեյսբուքյան էջում, ուղարկվում է ԶԼՄ-երին:

55. Աշխատանքային խմբի կողմից իրականացվող դիտարկման ընթացքում երրորդ կողմերը (ՀՀ քաղաքացիներ, ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք, պաշտոնատար անձինք) կարող են աշխատանքային խմբին ներկայանցել սույն բաժնի 46-րդ կետում թվարկված որևէ հանգամանքի վերաբերյալ տեղեկատվություն: Նման տեղեկատվությունը Աշխատանքային խումբը պարտավոր է հաշվի առնել իր կարծիքի հիմնավորման շրջանակներում (թե՛ ընդունելու և թե՛ հերքելու պարագայում):

56. Աշխատանքային խմբի եզրակացությունը պետք է հաշվի առնվի Երևանի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից՝ քննվող դիմումի վերաբերյալ վերջնական եզրակացության տրամադրման շրջանակներում (թե՛ ընդունելու և թե՛ հերքելու պարագայում):

57. Երևանի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի վերջնական եզրակացությունը հիմք է հանդիսանում քննվող հարցի շուրջ ավագանու քվեարկության համար:

58 Երևանի ավագանու կողմից կազմակերպություններին անհատույց գույքի տրամադրման դեպքում կնքվում է գույքի օգտագործման պայմանագիր Երևանի քաղաքապետարանի և գույքը տնօրինող կազմակերպության միջև:

59 Պայմանագիրն իր մեջ պետք է ներառի՝

1) Գույքի օգտագործման նպատակները
2) Գույքի օգտագործման ժամկետը
3) Գույքի օգտագործման հետ կապված աշխատանքների կատարման ժամկետները
4) Գույքի օգտագործման հետ կապված կողմերի պարտականությունները և իրավունքները
5) Գույքի օգտագործման հետ կապված հաշվետվությունների ներկայկացման ժամկետները

VII. «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

60. Երևանի քաղաքապետարանը ամեն տարվա ավարտին իրականացնում է մշտադիտարկում՝ կապված անհատույց գույքի տրամադրմնան պայմանագրի պահաջնջների իրականացման և գույքի նպատակային օգտագործման հետ: Յուրաքանչյուր մշտադիտարկման արդյունքում ձևավորվում է հաշվետվություն, որը ներկայացվում է Երևանի ավագանու խմբակցություններին: Տարեկան հաշվետվությունների ուսումնասիրման հիման վրա իրականացվում է ավագանու քվեարկություն՝ տալով՝ «գերազանց», «բավարար» և «անբավարար» եզրակացություններ: Տվյալ եզրակացությունների հիմքում ընկած գնահատման միավորներն արտացոլված են Մշտադիտարկման օրինակելի ձևաթղթում, որը հասանելի է Երևանի քաղաքապետարանի

կայքէջում։ «Անբավարար» եզրակացության պարագայում Երևանի քաղաքապետարանը կասեցնում է գույքի տիրապետման պայմանագիրը։

61. Երևանի քաղաքապետարանն ու ավագանու անդամներն ունեն տրամադրված գույքի օգտագործման նպատակային նշանակությունը ստուգելու նպատակով ժամանակ առ ժամանակ տարածք այցելելու և հարցումներ անելու իրավունք։

62. Գույքի տիրապետման պայմանագրի ավարտին Երևանի քաղաքապետարանն իրականացնում է Վերջնական գնահատում։ Վերջնական գնահատման հիման վրա իրականացվում է ավագանու քվեարկություն՝ տալով՝ «գերազանց», «բավարար» և «անբավարար» եզրակացություններ՝ «գերազանց», «բավարար» և «անբավարար» եզրակացություններով։ Տվյալ եզրակացությունների հիմքում ընկած գնահատման միավորներն արտացոլված են Վերջնական գնահատաման օրինակելի ձևաթղթում, որը հասանելի է Երևանի քաղաքապետարանի կայքէջում։

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Գ.ԵՐԻՑՅԱՆ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը, ընդ որում՝ հողամասերի օտարման տարեկան ծրագրի մեջ պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները և օտարման եղանակները:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝Երևանի քաղաքապետն ավագանուն է ներկայացնում Երևանի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարելու տարեկան ծրագիրը, դրան համապատասխան՝ տնօրինում է Երևանի սեփականություն համարվող գույքը:

2019 թվականի դեկտեմբերի 25-ի նիստում Երևանի ավագանին ընդունեց «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» որոշումը՝ մտահոգություն հայտնելով, որ այն չի կարգավորում Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող գույքը Երևան համայնքի տարածքում գործող կազմակերպություններին օգտագործման տրամադրելու և օտարման կարգը: Երևանի ավագանու անդամները չունեն հստակ չափորոշիչներ, որոնցով գնահատում են Երևանի քաղաքապետարանին անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք ստանալու մասին դիմումները և որոշումները հաճախ կայացվում են սուբյեկտիվ: Միևնույն ժամանակ ոչ բոլոր դիմումներն են ներկայացվում Երևանի ավագանու նիստին որպես նախագիծ և դրանց ներառումը նիստի օրակարգ կատարվում է ընտրողաբար: Արդյունքում ավագանու անդամները տեղյակ չեն, թե քանի դիմում է ստացվել և ինչ չափանիշներին հիման վրա են որոշակի դիմումներ դառնում որոշման նախագիծ, որոշները՝ ոչ:

«Իմ Քայլը խմբակցության անդամները բազմիցս նշել են, որ այս գործընթացումկա առավել մեծ թափանցիկության և հստակ չափորոշիչների մշակման անհրաժեշտություն և համայնքը պետք է սահմանի այն գերակա ուղղությունները, որոնց շրջանակներում պատրաստ է հասարակական կազմակերպություններին անհատույց անշարժ գույք տրամադրել համայնքի շահերից բխող ծրագրերի իրականացման համար: Հասարակական կազմակերպությունները և առևտրային կազմակերպությունները չպետք է դիտարկվեն նույն ընթացակարգով և այս պահին հասարակական կազմակերպություններին անհատույց գույքի տրամադրումը կատարվում է առանց որևէ չափորոշիչի»:

Սույն փոփոխությունը ծրագրով նախատեսում է նաև Երևանի քաղաքապետի որոշմամբ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը օգտագործման տրամադրել և(կամ) օտարել Երևան համայնքի տարածքում գործող կազմակերպություններին:

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրում փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունումը նպատակաուղղված է կարգավորելու օտարված կամ անհատույց օգտագործման տրամադրված համայնքային սեփականության օբյեկտների՝ կազմակերպությունների կողմից տնօրինման և օգտագործման գործընթացի կանոնակարգմանը։

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Գ.ԵՐԻՑՅԱՆ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ **2020** ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու եւ օտարման 2020 թվականի ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Գ.ԵՐԻՑՅԱՆ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ **2020** ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու եւ օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ» որոշման նախագծի ընդունման կապակցության Երևանի բյուջեի եկամուտներում սպասվում են էական մուտքեր:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Գ. ԵՐԻՑՅԱՆ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, առարկության հեղինակը	**Առաջարկության, առարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**
1.	Երևանի ավագանու Ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով	- Նվազեցնել Երևան համայնքի անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով ՀԿ-ներին տրամադրումը 5 տարուց 2 տարի: - 46-րդ կետից հանել 1-ին կետը և 3-րդ կետում նվազնել 5 տարին և դարձնել 2 տարի - 47-րդ կետի 4-րդ ենթակետից հանել լողը - 51-րդ կետում կազմակերպության գրանցման վկայականի պատճենը փոխարինել պետ ռեգիստրի քաղվածքով – Ավագանու անդամներից բաղկացած աշխատանքային խումբը կազմել յուրաքանչյուր նստաշրջանի սկզբում - 59-րդ կետում քաղաքապետարանի մոնիթորինգը երկու տարին մեկ անգամ անցկացնելը փոխարինել յուրաքանչյուր տարվա ավարտին - գերակայություններում ավելացնել նաև քաղաքացիների իրավունքների պաշտպանության, բարձրաձայնման, ուսումնասիրման հետ կապված գործունեությունը: - Դիմորդից պահանջվող փաստաթղթերի մեջ ավելացնել նամակ-հիմնավորում, որտեղ դիմումատուն ներկայացնում է ակնկալվող գործունեությունը, հիմնավորում է այդ գործունեության կարևորությունը Երևան քաղաքի և նրա բնակիչների համար, փաստարկում է Երևանի	Առաջարկություններն ընդունվել են: Կից ներկայացնում եմ որոշման նախագծի լրամշակված տարբերակը:

		քաղաքապետարանի կողմից կազմակերպությանն աջակցելու նպատակահարմարությունը:	

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՄ ՔԱՅԼԸ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԳՐԻԳՈՐԻ ԵՐԻՑՅԱՆ